

բովին իրենց համախմբութիւնը կորու-
սանելու, և այսպէս դիւրաւ կը ճերմէկ-
նան :

Կը շարունակուի :

Երեւվացւոց կրօնքն և սովորոյր-
ները .

Յունական բառէ ելած է երիւվայիա
և երիւվացի անունը, որ իրենց թիւա-
մորթութիւնը կը բացատրէ . բայց ժո-
ղովուրդը կը նախադասէ Ակազիացի
ըսուիլ, և թագաւորութիւնն ալ Ակա-
զի կամ կէզ անուանել : Հապէլ անունը
տալ Տաճիկներուն սեփհական է, և ը-
սել է ժողովուրդի խառնեալ . ասկէ ե-
լած է Երովացւոց Ապիսսինի բառը՝
որ հիմա սովորական եղած է :

Եթովպացէք աշխարհին գլխաւոր
բնակչքը կը համարուին . բարձրահա-
սակ են, երկայնահեր և դիմաց գծա-
գրութեամբ Երովացւոց նման . գոյ-
ներնին միայն ուրիշ ծանօթ ազգերէ
կ'որոշէ զիրենք . ոմանք գունատ թա-
նաքի կը նմանցընեն զանոնք և կամ հա-
սած ծիթապտղի . ոմանք ալ անագա-
խառն պղնձի : Բայց դիտուած է դու-
նոց զանազանութիւն ալ Եթովպակոյ
զանազան գաւառներու տակ . բարձրա-
ւանդակներուն վրայ բնակողներուն մոր-
թը պայծառ է . Դիկրէ բնակողներունը
գրեթէ ճերմակ . իսկ ցած և ճախճա-
խուտ տեղերունը գրեթէ սև : Գեղեցիկ
կը համարուին սևամորթները . անոր
համար շատ սպիտակներ իրենք զիրենք
կը սեցընեն . գեղեցիկ է աշուշնին, սպի-
տակ և գեղեցկայարմար ակուսներով,
բարեձև քիթով, անմօրուս՝ և կորովի
անդամներով :

Կիզ լեզուն՝ զոր Դիկրէի մէջ կը գոր-
ծածեն և որով բոլոր Եթովպացւոց
գրեանքը գրուած են և գիտունք ա-
րաբերէնի բարբառ . մը կը համարին .
Ամենարի լեզուն ալ որ Ճի դարէն ետ-
քը արքունեաց լեզուն եղած է արաբ-

րէնի շատ մօտ է արմատական բառե-
րու մէջ, բայց բառերուն դասաւորու-
թիւնը ուրիշ սկիզբ մը ունի : Կիզ լե-
զուն քան զարաբացին աւելի դժուա-
րալուր, և դժուարահնչիւն է . վեց բա-
ղաձայն ունին որոնց խստութիւնը եւ-
րոպացւոյ մը չնչափողը չկրնար ձեաց-
նել . Ամհարին թէպէտև քաղցրագոյն
քան զառաջինը՝ բայց չունի անոր քե-
րականական հարստութիւնը՝ ինչպէս
ունին բոլոր սեմական լեզուները : Կի-
զին մէջ յունական բառեր շատ կան .
ամենէն զուտ և անխառն բարբառը Դիկ-
րէին է, իրեն այբբէնգիմը շատ դարե-
րէ, 'ի վեր մասնաւոր ձև մը և եղանակ
մը առած է . այսինքն սեմական նշանա-
գիրները իսառնուած յոյն եգիպտական
նշանագրոց հետ, զարձեալ ձայնաւոր-
ներուն տեղ օտար նշանաձևներ փո-
խանակած ըլլալով՝ գրութիւնը տեսակ
մը վանդական՝ ոճ առեր է :

Բնիկ Եթովպացւոց մեզի ծանօթ
պատմութիւնը Սարա դշուոյէն առաջ
չանցնիր, որոյ որդին կ'ըսեն կոչուե-
ցաւ Մէհիհէլէք . և թագաւորութեան
յաջորդութիւնը հասաւ ինչուան Քրիս-
տոսի թուականութեան 960 երորդ տա-
րին : Երկու եղբարց՝ Ապրանայի և Ազ-
պահայի ժամանակ (330) քրիստոնէու-
թիւնը մտաւ իրենց երկիրն ալ . 522ին
Քալէպ թագաւորը՝ որ և Էջէսպաւան
կը կոչուէր, Յուստինիանոս կայսեր
դաշնակից՝ Արաբիոյ մէջ շատ պատե-
րազմներ ըրաւ Հրէից և Քորէշիդնե-
րու դէմ : Զակայիք հարստութիւնը
340 տարի իշխեց, ուսկից էր Լալիպա-
լա թագաւորը, որ ապառած տեղուան-
քը չէնցուց և ինը եկեղեցի փորել տը-
ւաւ քարերու մէջ . որոնց առաստալ-
ները սիւներու վրայ հաստատուած, և
պատերը արաբացի ճաշակով զարդա-
րուած են, Լալիպալայի գերեզմանը այս
եկեղեցիներէն մէկուն մէջն է, և Գոլ-
գորա կ'ըսուի :

Հիմա Եթովպացւոց և Երովացւոց
մէջ բաժանման պատուար մը քաշուած

է. տաճիկ և հեթանոս ազգերէ պաշա-
րուած՝ կարծես թէ իրենց բնատուր
մտաւոր ձիրքերը կորուսած՝ այն վի-
ճակն ունին Եթովլացիք զոր երկուտա-
սաներորդ դարուն ունին Եւրոպացիք .
Քրիստոնէութիւնը հրէութեան հետ
խառնած, թշվատութիւնը երկու սե-
ռին ալ անմեղ արարողութիւն մը կը
համարին. կիրակին շաբաթուան փո-
խած են. միաբնակը են դաւանութք,
բայց իրենց բազմաթիւ տօնական օրե-
րովը և ուրիշ սրբոց և հրեշտակաց և
սուրբ Աստուածածնայ յաճախ պաշ-
տօնատարութեամբ Սպանիացոցմէ և ի-
տալացոցմէ շատ վար չեն մնար: Խունկ
և օրհնեալ ջուր կը գործածեն. խոր-
հըրոց մէջ մկրտութիւնը, խորհըր-
դական խոստովանութիւնը, և հա-
ղորդութիւնը կ'ընդունին. երկու տե-
սակաւ կը հաղորդին և գոյացափո-
խութեան կը հաւատան: Իրենց Աս-
տուածաշունը ամենայն մասամբ ուղ-
ղափառացը կ'ըլլար եթէ Գիրք Ենով-
քայ ըսուածը դուրս ձգելու ըլլային:
Աքսումի մայր եկեղեցւոյն մէջ տապա-
նակ մը կայ, որ թագաւորութեան հաս-
տատութիւնը և ամբութիւնը կը համա-
րուի, և կ'աւանդեն որ Մէհիհէկէք ի-
րենց ամենահին թագաւորն Հրէաստա-
նէն Եթովլիի բերած ըլլայ: Այս ա-
մեն բաներուն վրայ օճապաշտութիւն
մ'ալ կ'աւելցընեն. այն աստիճան սրբ-
բազան կը համարուի աս կենդանին՝ որ
զայն սպաննողը մահուան կը դատա-
պարտեն: Նախ նախնի քրիստոնէու-
թիւնէն շատ տեսակ սովորութիւն-
ներ մինչև հիմա պահած են. եկեղե-
ցւոյն մէջ ոչ արձան կը թողուն, ոչ
քանդակ և ոչ խաչելութիւն, զոր քա-
հանայք միայն իրենց վրայ կը կրեն.
չափահասները միայն կը մկրտուին.
և մկրտութեան աւազանները միշտ ե-
կեղեցւոյն զրան քովը կը գտնուին:
Մըրազան տեղեաց մեծարանքը շատ
մեծ է մէջերնին, և թշնամեաց ձեռքէն
միակ ապաստանարան այս կը համա-
րուի. չմկրտեալ մը չիկրնար մտնալ
հոն. առանց կօշկի պիտի մոցուի և շատ

դէպքերու մէջ արանց ալ և կանանց ալ
արգելեալ է մուտքը. իսկ 'ի սրբութիւն
սրբոց մտնալը քահանայից միայն պա-
հուած է:

Ըստ անգղիացի քարոզչաց իրեք կրօ-
նական բաժանմունք կայ մէջերնին. ո-
մանք կ'ընդունին զբրիստոս Աստուած
միանգամայն և մարդ ինքն իրմով. ո-
մանք ալ մարդ եղած, բայց չոգւոյն
սրբոյ զօրութեամբը. իսկ ուրիշ ոմանք
ալ մարդ եղեալ, բայց մկրտութենէն
ետքը չոգւոյն սրբոյ իշմամբ:

Իրենց կղերին զուկը ապունեաւ
(հայր) կ'ըսուի որ միշտ օտար մարդ մը
կ'ըլլայ. երկրորդ դասը երիցապետը
քունսադնի է որոնք կանոնիկոսական
եկեղեցեաց հետ կապուած են: Անոնց-
մէ ետքը կու գան ժողովրդապետը (քա-
շիշ) անոնց տեղապահները սարկա-
ւագները, կէս սարկաւագները, ար-
բայք՝ աստուածաբանութէն վարպետք,
կրօնաւորք բազմաթիւ, որոց բնակու-
թիւնն եկեղեցւոյն բոլորտիքն է: Առա-
ջին և պատուաւոր կարգ կրօնաւորաց
սուլքը Անտոնայ է, որուն հնութիւնը
կ'ելլայ մինչև երկբտասաներորդ դար
հիմնեալ 'ի սրբոյն Եւստաքէոսէ և 'ի
սրբոյն Թէքլա-Հայեմաննուլ: Այս կրօ-
նաւորաց ամենէն մեծ օգուտը երկրա-
գործութիւն է. մուրանալ չունին, խոս-
տովանութիւնը շատ ցանցառ է ժողո-
վրդեան մէջ. կուսութիւնը միայն կրօ-
նաւորաց է:

Ինչպէս որ կ'երևայ, կրօնից ազգեցու-
թիւնը քաղաքակրթութեան վրայ ամե-
նաքիչ է. կառավարութեան կերպը ինքն-
իշխան թագաւորութիւն է: Առաջին
պաշտօնեայն Բա կ'ըսուի. ազնուակա-
նութիւնը ձևացընողները թագաւորա-
կան ցեղէն սերեալներն են. բազմակր-
ոնութիւնը թէպէտ և դատապարտեալ է
յեկեղեցւոյ, ազնուականաց ճիւղը կ'ա-
ճեցընէ: Իշխանք որոնք թագաւորու-
թեան կրնան կերպով մը իրաւունք ու-
նենալ միշտ բանտեալ են. ըստ օմանց
պատմագրաց ինչը սոտնալու իրաւուն-
քը չկայ. բայց այս շատ ստոյդ չերեւար.
վասն զի պաշտօնեամբ որ դրուած են եր-

կրին բերոց գինը կտրելու և երկրի վարձուորներուն իրենց տիրոջը տալիքը հատուցանելու համար՝ հակառակը կը հասկընեն : Արդարութիւնը շոտով կը կատարուի . բայց խժուժ պատիժները շատ կը յաճախեն : Ատեաննին երկուտասանից ժողովով և մէկ դատաւորով կը ձեւանայ և նիստերը բայց թեայ կ'ըլլան՝ ինչպէս գոթացոց ատեանները : Թագաւորին եկամուտը կը հաւաքուի ցորենէ, պտղեղէնէ, մեղրէ . երեք տարին մէյմ'ալ կենդանեաց տասանորդով :

Եթովպացիք որովհետև պատերազմական օրինաց և կարգաց տակ չեն ձգած զինուորութիւնը, շատ անգամ մեծամեծ կոստորած կ'ունենան . իսկ եթէ յաղթեն, անդթութիւնը ձեռք կ'առնեն :

Բնակարաննին կլորածե տաղաւարներ են, կոնաձե երդիքով գոցուած անձրեէ պաշտպանելու համար : Գլխաւորաց բնակարանը շատ մասեր ունի . կարասեաց գլխաւորքն են քանի մը պարսկական կապերտ, ու հողէ ազնիւ և կէս թափանցիկ անօթ մը՝ բամբակէ և կաղնիի փոշով պատրաստուած կաշիէ հիւսուածներ, և երկաթեղէն և պինձեղէն դործիներ :

Սրհեստները և ձեռագործները ըստ մեծի մասին օտարականաց ձեռքն են՝ մանաւանդ Հրէից : Ամենայն տեսակ ու տեստ աժան է Եթովպիհա . կով մը 1/4 ֆրանք . հաւ մը երկու փող. քիչ արձէք ունեցող նիւթերը փոխանակութեամբ ձեռք կը բերեն :

Ցղայք բոլոր մերկ կը պուրտին . իսկ չափահասից զգեստը նախնի պարզութեան մէջ է . թեթև վարտիք մը, թեսւոր պարեգոտ մը, և մէկ սպիտակ բամբակէ մեկնոց մը կը ձեւացնեն բովանդակի իրենց հագուստը . իսկ գլուխնին մեծ և լայն փակեղն մ'ունին՝ կանանց հազրաւաներն ումանք կուրծքերն ալ կը դոցեն, ումանք ալ ազդրներէն կը սկըսին :

Մեծամեծաց կերակուրները առատ՝ բայց անհարթ ոճով պատրաստուած

են . հում միաը պաղ արեամբ համեմած ախորժնին կը բանայ : Մաիզ¹ և սուէ² կամ պորիզ ըմպելիքները իրենց հայկերոյթին զուարճութիւնը կ'աւելցնեն : Թագաւորը և րաք կամ բանակաց առաջնորդք իրենց զուարճութեանը համար միմուներ կը պահնեն . բանաստեղծներ ալ ունին որոնք բոլոր գիշերը կ'արտասանեն, կամ յանպատրաստից երգեր կը շնեն : կնկան մը համար կը պատմեն թէ, 'ի մանկութենէ քերթութեան տուած ըլլարով ինքզինքը՝ մեծ համբաւ ստացեր է, և անոնը աւելի հոչակելու համար՝ առանց վճարքի գիշերուան ժամերը ուրիշներու քով կ'անցնէ եղեր երգելով : Ստորին աստիճանի մարդկանց զուարճութիւնը, մանաւանդ մեծ պաքէն ետքը, քերաս խաղն է . թակախաղին մէկ տեսակը . երիտասարդաց խումբեր մէկտեղ կը միանան, և շատ անգամ, բովանդակ գիշեր զիրար կուուի կը կանչեն, և գրեթէ միշտ խաղին կատարածը աղետամի է :


Արք ըստ օրինի կին մը միայն կ'առնեն, բայց ամուսնութեան կապը միայն քաղաքական է և դիւրալուծանելի . իսկ կրցողները հարճերը քովերնէն չեն հեռացըներ : Կրօնքնին աչք չի դոցեր այս անկարգութեանց և ով որ ամուսնական լցոյն դէմ անիրաւի՝ անհաղորդ կը մնայ :

Մեռնողը՝ եթէ օտարական ըլլայ և եթէ ոչ դրակիցք միաբան ցաւերնին կը յայտնեն . ամենքը կը փութան ըստ իրենց կարողութեանը վախճանելցն ամենամօտ ազգականին առատութեքութեանիք տանիլ . զանիկայ զբաղեցընելու կը ջանան և խցընելու . քիչ ատենէն տիսրութիւնը կատարեալ արքեցութեան կը փոխուի : Թաղման համար շատ ծախք չեն ըներ . վասն զի դրացեներն են գերեզման փորողները . մեծ ծախքը աղօթող քահանայից համար

¹ Տեսակ մը մերժածուր՝ բայց ափենով զբացած :

² Պիրայի տեսակ :

³ Mail.



Արոց Օդդենդացի.

Կ'ըլլայ : Ընտանիքներ յետին աղքա-
տոթեան մէջ ինկեր են՝ ըստ օրինի
հանգուցելց մը վրայ աղօթող քահա-
նաները վեց ամիս միտով և եղիպտա-
ցորենով պահելնուն համար :

ՕԴԴԵՆԴԱՑԻՔ

Օդդենդացիք բարի Յուսոյ Գլխոյն
բնիկ ժողովրդն են . տարբեր Քափրաս,